[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
4	Մարտ	2019 թ.		Բ	6389379704
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
27	Փետրվար	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Փորձագիտական եզրակացություն N 03511801

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի		
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 2 6 8 1 8 7 7	
[9] Անվանումը	«ԷՔՍՊԵՐՏ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[10] Բանկային տվյալները	ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ ՇԵՆԳԱՎԻԹ Մ/Ճ	N 220098531571000
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ 16/35	
[12] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի			
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3		
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ		
[15] Բանկային տվյալները	ՖՆ աշխատակազմի Գործառնական Վարչություն	N 900011000834	
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		
[17] Լրացուցիչ տվյալներ			
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N Ձ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծավալակազմող ըստանիշը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություն		1	200000	200000
Ընդամենը					200000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ MINASYAN RUZANNA 6308760374

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

04/03/2019 10:45:27

ՈՐՈՇՈՒՄ

Դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

< 10 > դեկտեմբերի 2018թ. *ք.Արմավիր*

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Բ.Կիրակոսյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ **48201018** քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

09.08.2018թ.-ին Արմավիրի մարզի դատախազությունից թիվ 60/453 մտ-18 գրությամբ ստացվել է Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի մի խումբ բնակիչների կողմից Արմավիրի մարզպետարանին հասցեագրված դիմումներով իրավախախտումներ պարունակող փաստերի ուսումնասիրության նպատակով Արմավիրի մարզպետի 2018թ. հուլիսի 25-ի N254 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2018թ. հուլիսի 30-ից օգոստոսի 3-ը ներառյալ, 2015թ.-ից 2018թ.-ն ընկած ժամանակահատվածի համար իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները:

Ներկայացված արդյունքների հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում նախապատրաստվել են նյութեր:

20.08.2018թ. որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Հիշյալ որոշման օրինակն ուղարկվել է Արմավիրի մարզպետին, պարզաբանելով՝ որոշման բողոքարկման օրենքով սահմանված կարգը:

04.09.2018թ. ՀՀ գլխավոր դատախազությունից Արմավիրի մարզի դատախազություն է ստացվել Արմավիրի մարզպետի՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրած գրությունն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզպետի 2018թ. հուլիսի 25-ի N254 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից մարզի Եղեգնուտ համայնքում իրականացրած իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներում առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստական տվյալներ:

Նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 20.08.2018թ. որոշման դեմ Արմավիրի մարզպետի հիշյալ բողոքի հիման վրա Արմավիրի մարզի դատախազությունում նյութերի ուսումնասիրության արդյունքում 05.09.2018թ. Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանի կողմից որոշում է կայացվել նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին ավագ քննիչ Ս.Հակոբյանի 20.08.2018թ. կայացրած որոշման դեմ ներկայացված Արմավիրի մարզպետի բողոքը բավարարելու, հիշյալ որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով թիվ **48201018** քրեական գործը հարուցելու մասին:

07.09.2018թ. թիվ **48201018** քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար:

29.10.2018թ. ոստիկանության Արմավիրի բաժնից ստացվել է թիվ **48179018** քրեական գործը, որի նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 24.10.2018թ. ՀՀ ՈԱՄՎ Արմավիրի

բաժնի ՔՀԲ ավագ օ/լ Հ.Ղանդիլյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղի համայնքի ղեկավար Ռազմիկ Արամայիսի Մարգարյանը 2017-2018թթ.. ընթացքում կազմել է կեղծ պայմանագրեր և համայնքի բյուջեից յուրացրել է գումարներ:

Հ.Ղանդիլյանի զեկուցագրի հիման վրա ոստիկանության Արմավիրի բաժնում նախապատրաստվել են նյութեր ինչի շրջանակներում Ռազմիկ Մարգարյանը ՀՀ ՈԱՄՎ Արմավիրի բաժնում իր կողմից տրված բացատրությամբ հայտնել է, որ նախնական համաձայնության գալով Կարեն Սամվելի Բարսեղյանի հետ և ստանալով նրա օժանդակությունը՝ 13.07.2017թ. <<Բարսեղյան Կարեն>> ԱՁ-ի հետ կնքել է Եղեգնուտ գյուղի զոհված ազատամարտիկների գերեզմանոցի վերանորոգման թիվ 34 պայմանագիրը և ըստ պայմանավորվածության՝ <<Բարսեղյան Կարեն>> ԱՁ-ի հաշվեհամարին փոխանցել է 980.000 ՀՀ դրամ, որից 98.000 ՀՀ դրամը տվել է Կարեն Բարսեղյանին, մնացած 882.000 ՀՀ դրամից 350.000 ՀՀ դրամը յուրացրել է, իսկ մնացած գումարով կատարել է գերեզմանոցի վերանորոգում:

Դրանից հետո 08.11.2017թ. <<Բարսեղյան Կարեն>> ԱՁ-ի հետ կնքել է Եղեգնուտ գյուղի փողոցների խճապատման թիվ 42 կապալի պայմանագիրը և ըստ պայմանավորվածության՝ <<Բարսեղյան Կարեն>> ԱՁ-ի հաշվեհամարին փոխանցել է 962.500 ՀՀ դրամ, որից 96.000 ՀՀ դրամը տվել է Կարեն Բարսեղյանին, 866.000 ՀՀ դրամից 350.000 ՀՀ դրամը յուրացրել է, իսկ մնացած գումարով կատարել է փողոցների խճապատում:

Վերոգրյալը հիմնավորվել է ինչպես նյութերում առկա պայմանագրերով և հաշիվ ապրանքագրերով, այնպես էլ Կարեն Բարսեղյանի բացատրությամբ:

Դեպքի առթիվ 29.10.2018թ. ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի և 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ **48179018** քրեական գործը և այն 29.10.2018թ. ուղարկվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար:

29.10.2018թ. որոշում է կայացվել թիվ ***48179018*** քրեական գործը միացնել թիվ ***48201018*** քրեական գործին և նախաքննությունը շարունակել մեկ վարույթում՝ ***48201018*** համարով :

06.11.2018թ. Ռազմիկ Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

07.11.2018թ. Կարեն Բարսեղյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

12.11.2018թ. Եղեգնուտի համայնքապետարանից առգրավվել է՝ <<Զոհված ազատամարտիկների գերեզմանոցի վերանորոգման>> 13.07.2017թ. թիվ 34 պայմանագրի, ծավալաթերթի, կատարողական ակտի, 08.11.2017թ. թիվ 42 կապալի պայմանագրի, ծավալաթերթի, կատարողական ակտի, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտի բնօրինակները:

13.11.2018թ. Ռազմիկ Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

14.11.2018թ. Կարեն Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի

38-րդ հոդվածի 5-րդ մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Նկատի ունենալով, որ կատարված աշխատանքների համապատասխանությունը կատարողական ակտերին, ինչպես նաև կատարված աշխատանքների արժեքը պարզելու համար անհրաժեշտ են դատական շինարարատեխնիկական և դատական ապրանքագիտության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ և 249-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Էքսպերտ փորձագիտական կենտրոն>> ՍՊ ընկերությանը:

2. Փորձագետի պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցը.

- <<Զոհված ազատամարտիկների գերեզմանոցի վերանորոգման>> 13.07.2017թ. թիվ 34 պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվե՞լ են արդյոք կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալին և արժեքին համապատասխան, թե՞ ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ անհամապատասխանություններ են առկա:
- 08.11.2017թ. թիվ 42 կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվե՞լ են արդյոք կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալին և արժեքին համապատասխան, թե՞ ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ անհամապատասխանություններ են առկա:

3. Փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրել սույն որոշումը, ինչպես նաև Եղեգնուտի համայնքապետարանից առգրավված բնօրինակ փաստաթղթերը՝ <<10>> թերթ, մասնավորապես՝ <<Զոհված ազատամարտիկների գերեզմանոցի վերանորոգման>> 13.07.2017թ. թիվ 34 պայմանագիրը, ծավալաթերթը և կատարաողական ակտը, 08.11.2017թ. թիվ 42 կապալի պայմանագիրը, ծավալաթերթը, կատարողական ակտը և հանձնման-ընդունման ակտը:

4. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն շինարարատեխնիկ և ապրանքագետ փորձագետների իրավասության մեջ, և որոնց պարզաբանումը կարող է կևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար :

5. Հանձնարարել <<Էքսպերտ փորձագիտական կենտրոն>> ՍՊ ընկերության ղեկավարին՝ փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ՔՆՆԻՉ՝ **Բ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**